

Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
մայիսի 8-ի N 663 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2004 թվականի
մարտի 18-ի N 349-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԻԴՐՈԳԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՊՐՈՑԵՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՈՒՅԺ ՇՏԱՊ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀՈՒՅԺ ՇՏԱՊ ՀԻԴՐՈԳԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ		
1) ՕԳԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ		
NN ը/կ	Տեղեկատվության անվանումը	Տեղեկատվության բնութագիրը
1.	Փոթորիկ	քանու առավելագույն արագությունը 33 մ/վրկ և ավելի
2.	Ուժեղ քամի (այդ թվում՝ փոթորկանք)	պոռթկումը 25 մ/վրկ և ավելի արագությամբ կամ միջին արագությունը 20 մ/վրկ և ավելի
3.	Պտտահողմ	ուժեղ պտտահողմ սյան կամ ձագարի տեսքով ուղղված ամպից դեպի երկրի մակերևույթ
4.	Ուժեղ հորդառատ անձրև	քանակը՝ 30 մմ և ավելի՝ մինչև 1 ժամվա ընթացքում
5.	Երկարատև ուժեղ անձրև	տեղումների քանակը՝ 50 մմ-ից ոչ պակաս՝ 12 ժամից ավելի, բայց 48 ժամից պակաս ժամանակահատվածում
6.	Խոշոր կարկուտ	մթնոլորտային պինդ տեղումներ՝ 10 մմ և ավելի տրամագծով
7.	Շատ ուժեղ ձյուն	քանակը՝ 20 մմ և ավելի՝ մինչև 12 ժամվա ընթացքում
8.	Ուժեղ մառախուղ	տեսանելիությունը՝ 50 մետրից ոչ ավելի
9.	Ուժեղ մերկասառույցաջինջառային նստվածքներ լարերի վրա	նստվածք լարերի վրա՝ մերկասառույցի դեպքում՝ 20 մմ-ից ավելի շառավղով ջինջառի դեպքում՝ 50 մմ-ից ավելի շառավղով
10.	Ուժեղ բուք, այդ թվում՝ գետնաբուք	1 և ավելի ժամվա ընթացքում՝ 15 մ/վրկ և ավելի քանու պոռթկմամբ և 500 մետրից պակաս տեսանելիության պայմանով

11.	Ձնահյուս	լեռներից իջնող հյուս, որը զգալի վնաս է հասցնում օբյեկտներին կամ առաջացնում է բնակավայրերի համար վտանգավոր իրավիճակ
12.	Արտակարգ հրդեհավտանգություն	հրդեհավտանգության 4-րդ կարգ և ավելի (4000°C ավելի՝ ըստ Նեստերովի բանաձևի)
13.	Սաստիկ սառնամանիքներ	հովտային և նախալեռնային շրջաններում՝ -20°C և ցածր լեռնային շրջաններում՝ -30° և ցածր
14.	Սաստիկ շոգեր	հովտային շրջաններում՝ 40°C և ավելի նախալեռնային շրջաններում՝ 35°C և ավելի լեռնային շրջաններում՝ 32°C և ավելի
2) ԱԳՐՈՐԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ		
1.	Ցրտահարություններ	բույսերի վեգետացիայի ժամանակահատվածում ջերմաստիճանի նվազում 0°C-ից ցածր օդում կամ հողի մակերևույթին՝ օդի միջին օրական դրական ջերմաստիճանի պայմաններում
2.	Հողի գերխոնավություն	վեգետացիայի ժամանակահատվածում 10-12 սմ խորության վրա 10 օր և ավելի հողը գտնվում է կաչող և հոսող վիճակում
3.	Խորշակ	մշակաբույսերի վեգետացիայի շրջանում 3 օր անընդմեջ և ավելի օրական նույնիսկ մեկ դիտարկման ժամանակ ավելի քան 7 մ/վրկ արագության քամու առկայություն, որի դեպքում հարաբերական խոնավությունը իջնում է 30% և ցածր, իսկ ջերմաստիճանը բարձրանում է +25°C և ավելի
4.	Մթնոլորտային երաշտ	բույսերի վեգետացիայի ժամանակահատվածում արդյունավետ (օրվա ընթացքում ավելի քան 5 մմ) տեղումների բացակայությունն անընդմեջ 30 օրվանից ոչ պակաս ժամանակահատվածում 30°C-ից, իսկ 1800 մ և ավելի բարձրություններում 25°C-ից բարձր ջերմաստիճանի պայմաններում
5.	Հողի երաշտ	երևույթ, որի դեպքում բույսերի վեգետացիայի ժամանակահատվածում տեղումների բացակայության պայմաններում հողի 0-20 սմ շերտում 10 օր անընդմեջ արդյունավետ խոնավության պաշարները կազմում են մինչև 10 մմ

3) ՀԻԳՐՈՂՈԳԻԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ		
1.	Գետերում ջրի շատ բարձր ելքեր	գարնանային վարարումների ընթացքում ձնհալքով և անձրևներով պայմանավորված՝ և (կամ) ամառ-աշնանային հորդացումների ժամանակ հորդառատ անձրևներով և կարճատև ձնհալքով պայմանավորված՝ ջրի ելքերի բարձրացում տվյալ գետի/դիտակետի բացարձակ առավելագույն ելքի 70 տոկոսից ավելիի դեպքում
2.	Հանկարծահաս հեղեղում	համեմատաբար բարձր (պիկային) ելքերով կարճատև հեղեղում, ինչպես նաև այն տարածքների և օբյեկտների արագ ջրածածկումը, որոնք սովորաբար ջրի տակ չեն գտնվում (ճանապարհներ, շինություններ և այլն)
3.	Սելավ	առատ տեղումներով պայմանավորված՝ մեծաքանակ ջրի հոսք, որը պարունակում է շատ մեծ քանակությամբ կախված և գլորվող կոշտ նյութեր և կարող է վնաս հասցնել բնակավայրերին, արդյունաբերական օբյեկտներին, մայրուղիներին, ոռոգման համակարգերին և այլն
4.	Գետերում ջրի շատ ցածր ելքեր	տվյալ գետի/դիտակետի բացարձակ նվազագույն ելքի 90 տոկոսից ցածր ելքի դեպքում
4) ՌԱԴԻԱՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ		
1.	Ռադիացիայի մակարդակ	60 մկր/ժամ և ավելի
2.	Ռադիոակտիվ աերոզոլների խտություն	մթնոլորտում ռադիոակտիվ աերոզոլների խտության գերազանցումը 3700.10-5 բկ/մ3
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻԳՐՈՑԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ		
1.	Նախորդ օրվա դիտված առավելագույն և նվազագույն ջերմաստիճանը, տեղումների քանակը, օդերևութաբանական երևույթը, ամպամածությունը, ձյան ծածկի բարձրությունը հանրապետության տարածքում	
2.	Արեգակի ճառագայթների ուլտրամանուշակագույն ինդեքսի կանխատեսում՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի համար	յուրաքանչյուր աշխատանքային օր
3.	Եղանակի կանխատեսումը	եղանակի կարճաժամկետ և միջնաժամկետ

	Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում 1 օրվա և մոտակա 5 օրվա համար	կանխատեսումներ
4.	Երևան քաղաքի բազմամյա կլիմայական տվյալները	յուրաքանչյուր աշխատանքային օր ամենօրյա հիդրոոդերևութաբանական տեղեկագրի տեսքով տրվում են հանրապետության տարածքում դիտված և կանխատեսվող հիդրոոդերևութաբանական երևույթների (տարրերի) մեծությունները 1-5 օրերի համար
5.	Երկրի արհեստական արբանյակից ստացված ամպամածության պատկերը տվյալ պահին	
6.	Հելիոֆիզիկական և ռադիոացիոն ռեժիմի (տվյալ և հաջորդ օրվա) բնութագրերը	
7.	Սևանա լճի մակարդակ	տրվում է ամենօրյա տեղեկատվություն Սևանա լճի ջրի մակարդակի վերաբերյալ
8.	Ըստ «Ծովինար» դիտակետի Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի քանակ	տրվում է ամենօրյա տեղեկատվություն Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի ծավալի վերաբերյալ
9.	Ըստ «Գեղամավան» դիտակետի Սևանա լճից բաց թողնված ջրի քանակ	տրվում է ամենօրյա տեղեկատվություն Սևանա լճից իրականացված ջրառի ծավալի վերաբերյալ
10.	Ջրամբարների ջրալցվածություն	տրվում է ամենօրյա տեղեկատվություն ջրամբարներում առկա ջրի ծավալների վերաբերյալ
11.	Գետերում ջրի ելքերը	ըստ գետային դիտակետերի տրվում է ամենօրյա տեղեկատվություն գետերում նախորդ և ընթացիկ օրվա ջրի ելքերի վերաբերյալ
12.	Հիդրոլոգիական կանխատեսումներ	տրվում են ամենօրյա, տասնօրյակային, ամսական կտրվածքով գետերում ջրի ելքերի կանխատեսումներ
13.	Ամսական եղանակային պայմանների կանխատեսում	ամսվա սկզբից 5-10 օր առաջ տրվում է հանրապետության տարածքի համար սպասվող ջերմային և տեղումների ռեժիմների կանխատեսումը
14.	Մեզոնային եղանակային պայմանների կանխատեսում	եռամսյակի սկզբից 10-15 օր առաջ տրվում է հանրապետության տարածքի համար սպասվող ջերմային և տեղումների ռեժիմների կանխատեսումը
15.	Ամսական տեսություններ՝ դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների մասին	ամիսը վերջանալուց հետո 5 օրվա ընթացքում տրվում է տեղեկատվություն դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների մասին

16.	Շաբաթական տեսություններ՝ դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների մասին	յուրաքանչյուր երկուշաբթի տրվում է տեղեկատվություն հանրապետությունում անցած շաբաթվա ընթացքում դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների մասին
17.	Հայաստանի Հանրապետության գետերի գարնանային վարարումների տարրերի կանխատեսում	ամեն տարի մարտի 3-րդ տասնօրյակին տրվում է հանրապետության գետերի գարնանային վարարումների հոսքի ծավալի, առավելագույն ելքերի, վեգետացիոն ժամանակահատվածի միջին ելքերի, Սևանա լիճ և խոշոր ջրամբարներ գարնանային վարարումների ընթացքում գետային ներհոսքի, 5 ջրամբարների (Արփի լիճ, Ախուրյան, Ապարան, Մարմարիկ, Ագատ) առավելագույն լցվածության, Սևանա լճի մակարդակի վերաբերյալ կանխատեսումներ, որոնք կազմվում են նախաձմեռային և ձմեռային ամիսների փաստացի, և վարարումների ժամանակաշրջանի կանխատեսվող հիդրոոդերևութաբանական պայմանների վերլուծության հիման վրա
18.	Սևանա լճի ջրային հաշվեկշիռ	ամեն ամսվա և տարվա ավարտից հետո 15 օրվա ընթացքում տրվում է տեղեկատվություն Սևանա լճի ջրային հաշվեկշռի մուտքի և ելքի բաղադրիչների արժեքների և դրանց հարաբերակցության, ինչպես նաև լճի ձևաչափական բնութագրիչների վերաբերյալ
19.	Տեղեկանքներ և կանխատեսումներ աշնանացան ցորենի ցանքի, աճի, զարգացման փուլերի և վնասվածության վերաբերյալ	տրվում է հանրապետությունում դիտված և կանխատեսվող ջերմաստիճանների, տեղումների և խոնավության հիման վրա
20.	Հացահատիկային մշակաբույսերի միջին բերքատվության կանխատեսումներ՝ 1) վեգետացիայի վերսկսման ժամանակ 2) ցողունակալման ժամանակ 3) մոմային հասունացման ժամանակ	տեղեկատվությունը տրվում է 3 անգամ՝ հանրապետությունում դիտված և կանխատեսվող ջերմաստիճանների, տեղումների, խոնավության և ֆենոլոգիական փուլերի հիման վրա
21.	Բանջարաբուստանային մշակաբույսերի և կարտոֆիլի միջին հանրապետական բերքատվության կանխատեսումներ	տեղեկատվությունը տրվում է հանրապետությունում դիտված և կանխատեսվող ջերմաստիճանների, տեղումների, խոնավության և ֆենոլոգիական փուլերի հիման վրա: Կանխատեսումները կատարվում են յուրաքանչյուր մշակաբույսի համար 1-3 ամիս վաղօրոքությամբ՝ պայմանավորված հանրապետության տարածքի բնակլիմայական և լանդշաֆտային պայմաններով, ինչպես նաև մշակաբույսերի սորտերի հասունացման ժամկետներով
22.	Պտղատու, հատապտղատու մշակաբույսերի և խաղողի աճի զարգացման	տեղեկատվությունը տրվում է հանրապետությունում դիտված ջերմաստիճանների, տեղումների,

	փուլերի և ժամկետների ու բերքատվության կանխատեսումներ	խոնավության և ֆենոլոգիական փուլերի հիման վրա. կանխատեսումները կատարվում են 4 անգամ՝ մարտ-հուլիս ամիսներին
23.	Տասնօրյակային ագրոտեղեկագրեր	ներառում են տասնօրյակի ընթացքում դիտված օդերևութաբանական պայմաններ, մշակաբույսերի ցանքի, աճի, զարգացման և գյուղատնտեսական աշխատանքների վերաբերյալ տվյալներ _____»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ